



ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	1
2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	2
3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	7
3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման.....	7
3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման.....	9
3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի.....	12
4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	14
ԱՄՓՈՓՈՒՄ	15

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ


Սույն վերլուծությունը նվիրված է Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի¹ ուսումնասիրությանը:

Համաձայն Երևանի քաղաքապետի «Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին» ուղերձ-գեկույցի՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2024-2029 թվականների հնգամյա և 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Երևան քաղաքի 2024 թվականի ծրագրի առաջնահերթությունները, ինչպես նաև 2023 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, 2024թ. բյուջեով առաջնահերթ և գերակա են համարվել մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը և բնակչության կենսական շահերի ապահովմանը միտված ծրագրերը:

2024թ. բյուջեով կանխատեսվում են 124.6 մլրդ դրամի եկամուտներ՝ 2023թ. հաստատված բյուջեով նախատեսվածից 19.5 մլրդ դրամով կամ 18.6%-ով ավելի: Նախատեսվում է, որ բյուջեի ծախսերը կազմելու են 124.9 մլրդ դրամ՝ 19.4 մլրդ դրամով կամ 18.4%-ով գերազանցելով 2023-ի մեծությանը:

Պլանավորվում է պակասուրդային բյուջե. պակասուրդը 2024թ. կկազմի 0.3 մլրդ դրամ՝ 2023-ի տարեկան բյուջեով հաստատված 0.4 մլրդ դրամի դիմաց:

Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները, մլրդ դրամ



¹ Բյուջետային ուղերձ՝ <https://www.yerevan.am/uploads/media/default/.../.pdf>
Բյուջեի հավելվածներ՝ <https://www.yerevan.am/edfiles/Financedocs/.../.rar>

2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2024 թվականի բյուջեով ընդհանուր եկամուտների նախատեսվող մեծությունը գերազանցում է 2023-ի բյուջեով պլանավորված ցուցանիշին՝ 18.6%-ով և կազմում է 124.6 մլրդ դրամ, իսկ ճշտված պլանի² ցուցանիշի նկատմամբ աճն ավելի փոքր է՝ 4.9%:

Ընդհանուր եկամուտների աճը պայմանավորված է եկամտատեսակների «հարկեր և տուրքեր» և «այլ եկամուտներ» խմբերի աճերով, մինչդեռ «պաշտոնական դրամաշնորհների» ծավալը 2023-ի հաստատված բյուջեի համեմատ նվազել է: Նվազումը հաստատված բյուջեի նկատմամբ կազմում է 29.7% կամ 6.7 մլրդ դրամ, իսկ ճշտված պլանի համեմատ՝ 31.8% կամ 7.4 մլրդ դրամ:


Բյուջեի սեփական եկամուտների³ 2024-ի պլանավորվող ցուցանիշը կազմում է 61.5 մլրդ դրամ՝ 58.5%-ով գերազանցելով 2023-ի հաստատված բյուջեով ծրագրվածին: Ընդ որում՝ աճին 31.0 տոկոսային կետով նպաստել է այլ եկամուտների՝ սեփական եկամուտներ համարվող եկամտատեսակների ընդհանուր մեծության ավելի քան 2.1 անգամ ավելացումը, իսկ 27.5 տոկոսային կետով՝ «հարկերի և տուրքերի» 37.9%-ով աճը: Ի դեպ, «այլ եկամուտների»՝ սեփական եկամուտներ համարվող եկամտատեսակների ընդհանուր մեծության պլանավորվող ցուցանիշի աճն առավելապես պայմանավորված է տեղական վճարների կտրուկ՝ շուրջ 2.9 անգամ աճով: Իսկ «հարկերի և տուրքերի» աճը առավելապես՝ շուրջ 78.1%-ով, կապված է տեղական տուրքերի նույնպես կտրուկ՝ շուրջ 3.6 անգամ աճի հետ: «Հարկերի և տուրքերի» աճին նպաստել են նաև գույքային հարկերի (անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների համար գանձվող) հարկման բազաների ընդլայնումը և հարկման փաստացի դրույքաչափերի աճը: **Այսինքն՝ ընդհանուր եկամուտներում սեփական եկամուտների տեսակարար կշռի աճը բացատրվում է մի կողմից՝ տեղական տուրքերի, տեղական վճարների և գույքային հարկերի աճով, մյուս կողմից՝ պաշտոնական դրամաշնորհների ծավալի նվազմամբ:**

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի ոչ սեփական եկամուտները կազմելու են 63.1 մլրդ դրամ կամ նախորդ տարվա հաստատված բյուջեով նախատեսվող ցուցանիշից 4.8%-ով կամ 3.2 մլրդ դրամով պակաս:

² 2023 թվականի բյուջեի ճշտված պլանի ցուցանիշները վերցվել են 2023թ. բյուջեի ինն ամիսների կատարման հրապարակված հաշվետվությունից՝ <https://www.yerevan.am/uploads/.../pdf>

³ Երևան քաղաքի բյուջեի սեփական եկամուտներ են համարվում «Հարկեր և տուրքեր» հոդվածի և «Այլ եկամուտներ» հոդվածի բոլոր եկամտատեսակները, բացի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներից»:

Գծապատկեր 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտները, մլրդ դրամ⁴



2024 թվականի բյուջեով նախատեսվում է, որ **«հարկեր և տուրքեր»** ցուցանիշը կկազմի 38.9 մլրդ դրամ՝ 2023թ. հաստատված բյուջեով նախատեսվածից 37.9%-ով կամ 10.7 մլրդ դրամով ավելի: Դրանք բյուջեի ընդհանուր եկամուտների 18.6% աճին նպաստելու են 10.2 տոկոսային կետով:

Տեղական տուրքերի ծավալը 2023-ի համեմատ կտրուկ աճել է: «Հարկեր և տուրքեր» ցուցանիշի աճն առավելապես պայմանավորված է տեղական տուրքերի ծավալի աճով: Ակնկալվում է, որ դրանց ծավալը կաճի շուրջ 3.6 անգամ՝ 3.2 մլրդ դրամից հասնելով 11.6 մլրդ դրամի, իսկ նպաստումը «հարկեր և տուրքեր» ցուցանիշի աճին 2023թ. 0.3-ից կհասնի 29.6 տոկոսային կետի: Ծավալի աճը պայմանավորված է մի քանի տեղական տուրքերի (մասնավորապես՝ նավթամթերքների վաճառքի, ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, բացօթյա առևտուր կազմակերպելու, որոշ առևտրային օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար և այլն) դրույքաչափերի կտրուկ բարձրացմամբ, ինչպես նաև գանձվող տեղական տուրքերի ցանկի ընդլայնմամբ:

Համայնքային բյուջե վճարվող պետական տուրքերի նպաստումն էապես ավելի փոքր է՝ 0.3 տոկոսային կետ: Դրանց ծավալը 2023 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշին գերազանցում է 16.8%-ով:

«Հարկեր և տուրքեր» ցուցանիշի 37.9%-ով աճին զգալիորեն նպաստել են նաև անշարժ գույքի և փոխադրամիջոցների համար վճարվող գույքահարկի ծավալների աճերը՝ համապատասխանաբար 6.1 և 1.9 տոկոսային կետով: Դրանք

⁴ Գծապատկերը կառուցվել է 2020-2022 թվականների բյուջեների կատարման հաշվետվությունների և 2023 և 2024 թվականների տարեկան բյուջեների հիման վրա:

2024 թվականին կկազմեն համապատասխանաբար 13.4 և 13.3 մլրդ դրամ կամ 2023-ի բյուջեով նախատեսվածից 14.6%-ով և 4.3%-ով ավելի:

Բյուջեով պլանավորվող պաշտոնական դրամաշնորհների ծավալը նկատելիորեն նվազել է: 2023թ. հաստատված բյուջեով այն կազմել է 22.5 մլրդ դրամ, իսկ 2024թ. բյուջեով՝ 29.7%-ով պակաս՝ 15.8 մլրդ դրամ: Այդ մեծության 94.6%-ը կամ 15.0 մլրդ դրամը կկազմեն ՀՀ պետական բյուջեից հատկացվող ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները, որոնց մեջ 8.4 մլրդ դրամը կազմում են ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, 0.8 մլրդ դրամը՝ սուբվենցիաները, իսկ 5.7 մլրդ դրամը՝ այլ դոտացիաները: **Ի դեպ, ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ծավալը 2020 թվականից ի վեր առաջին անգամ նվազել է, ընդ որում՝ բավական շոշափելիորեն՝ 37.2%-ով կամ 5.0 մլրդ դրամով:** Ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) ծավալի նվազումն ավելի կտրուկ է՝ 87.4%-ով կամ 5.8 մլրդ դրամով: Միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող **ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ 2024 թվականի բյուջեով չեն նախատեսվում**, մինչդեռ 2023-ի բյուջեով դրանք կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ:

Միջազգային կազմակերպություններից ստացվող կապիտալ արտաքին դրամաշնորհների նախատեսվող ծավալը 2024-ի բյուջեում 2023-ի հաստատված բյուջեով պլանավորված մեծությունից ավելի է 16.6%-ով և կազմում է շուրջ 0.5 մլրդ դրամ: Ի դեպ, 2023-ի բյուջեում 2022-ի համեմատ այն նվազել էր 45.4%-ով: Այսինքն՝ չնայած ծրագրվող աճին, 2024-ի պլանավորվող ցուցանիշը դեռևս զգալիորեն զիջում է 2022-ի ցուցանիշին: Կառավարման այլ մակարդակներից ստացվող կապիտալ ներքին դրամաշնորհների պլանավորվող ծավալը՝ 0.4 մլրդ դրամ, ևս նվազել է. այն 2023-ի բյուջեով նախատեսվող մեծությունից պակաս է 45.0%-ով:


2024 թվականի բյուջեով ևս (ինչպես և նախորդ տարիներին) նախատեսվում է, որ ընդհանուր եկամուտների կազմում ամենամեծ տեսակարար կշիռը (56.1%) կունենան բյուջեի **այլ եկամուտները**՝ 69.9 մլրդ դրամ, որոնք 2023թ. հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 15.5 մլրդ դրամով կամ 28.6%-ով ավելի են: Ճշտված պլանի ցուցանիշին դրանք գերազանցում են ընդամենը 2.8 մլրդ դրամով կամ 4.2%-ով: Աճն առավելապես ապահովվելու է «վարչական գանձումների» հաշվին: Ակնկալվում է, որ 2024թ. ընթացքում «վարչական գանձումները» 2023-ի հաստատված բյուջեի համեմատ աճելու են շուրջ 2.6 անգամ կամ 11.4 մլրդ դրամով, իսկ դրանց նպաստումն այլ եկամուտների աճին կազմելու է 21.1 տոկոսային կետ:

Ի դեպ, «վարչական գանձումների» աճն ամբողջությամբ պայմանավորված է տեղական վճարների գծով մուտքերի կտրուկ՝ 2023-ի հաստատված բյուջեի ցուցանիշի համեմատ շուրջ 2.9 անգամ կամ 11.8 մլրդ դրամով ավելացմամբ: 2024թ. բյուջեով ակնկալվում է, որ դրանք կկազմեն 18.2 մլրդ դրամ: Հավաքագրվելիք միջոցների գերակշիռ մասը կազմում են նախագծման կամ դրա փոփոխության կատարման թույլտվության, 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և բնակելի նպատակային նշանակության շենքերի և շինությունների ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման, ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման նպատակով շինարարության թույլտվության, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ հանրային լուսմների կազմակերպման, ինչպես նաև Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի փոխանակության, նպատակային/գործառնական նշանակության փոփոխության, սահմանների ճշտման և շինությունների գործառնական նշանակության փոփոխության դեպքերում փաստաթղթերի պատրաստման համար գանձվող վճարները:

ՀՀ կառավարության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման համար Երևան քաղաքին տրամադրվող միջոցների 8.0%-ով կամ 3.5 մլրդ դրամով աճն այլ եկամուտների աճին նպաստելու է 6.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 3-ից երևում է, որ **2019-2022թթ. Երևան քաղաքի բոլոր տարիների բյուջեի եկամուտների հավաքագրումը թերակատարվել է թե՛ հաստատված բյուջեի և թե՛ ճշտված պլանի մեծության համեմատ:** Ընդ որում, 2020, 2021 և 2022 թվականներին ճշտված պլանի նկատմամբ կատարողականն ավելի բարվոք է հաստատված բյուջեի նկատմամբ կատարողականից զուտ այն պատճառով, որ այդ տարիների ճշտված պլաններով շոշափելի կերպով նվազեցվել են եկամուտների հավաքագրման պլանային մեծությունները: Օրինակ՝ 2021-ի հաստատված բյուջեով պլանավորվել է 92.4 մլրդ դրամ ընդհանուր եկամուտ, որն այնուհետև ճշտված պլանով նվազեցվել է մինչև 85.8 մլրդ դրամ, իսկ փաստացի եկամուտը կազմել էր 81.7 մլրդ դրամ: Կամ՝ ընդհանուր եկամուտների 2022-ի հաստատված բյուջեով պլանավորված մեծությունը 94.6 մլրդ դրամ է, ճշտված պլանինը՝ 87.5 մլրդ դրամ, իսկ փաստացի եկամուտը կազմել է 86.2 մլրդ դրամ:

Գծապատկեր 3. Երևան քաղաքի բյուջեի եկամուտների կատարողականը, %⁵



*Քանի որ 2023թ. բյուջեի ինն ամիսների կազմարման հաշվետվությունում այդ ամիսների ճշտված պլանը տրված չէ, ինն ամիսների փաստացի մեծությունները համեմատվել են հաշվետվությունում ներկայացվող տարեկան ճշտված պլանի ցուցանիշների հետ:

Ուշագրավ է, որ, չնայած ավտոկայանման վճարի դրույքաչափերի կտրուկ աճին, 2024թ. բյուջեով նախատեսվում է, որ ավտոտրանսպորտային միջոցների ավտոկայանատեղիում կայանման համար գանձվելիք վճարների տեսքով եկամուտները կազմելու են 1.4 մլրդ դրամ՝ 2023-ի բյուջեի ցուցանիշից ընդամենը 12.4%-ով կամ 150 մլն դրամով ավելի: Այնպիսի տպավորություն է, որ քաղաքային իշխանությունն այս «համեստությանը» դիմել է կա՛մ հատուկ («ապահովության համար») դրույքաչափերը հիմնականում ֆիսկալ նպատակներով բարձրացնելու մեղադրանքից խուսափելու համար, կա՛մ համոզված է, որ դրույքաչափերի կտրուկ աճը կհանգեցնի կայանվող ավտոմեքենաների քանակի գրեթե նույնպիսի կտրուկ նվազման: Ի դեպ, այս վճարների հաշվին բյուջեի փաստացի եկամուտների ակնկալվող աճը հետագայում իշխանությունները շատ կուզեն ներկայացնել որպես լրացուցիչ «աննախադեպ» ձեռքբերում եկամուտների հավաքագրման գործում:

Ամեն դեպքում, միանշանակ է, որ Երևանի կենտրոնը ավտոմեքենաներից «բեռնաթափելու» խիստ հրատապ խնդիրն այսպիսի արմատական եղանակով լուծելուն պետք է նախորդեին այնպիսի կարևոր քայլեր, ինչպիսիք են տրանսպորտային համակարգի արդյունավետ գործունեության ապահովումը, միասնական տոմսային համակարգի ամբողջական ներդրումը, կենտրոնին հարակից տարածքներում՝ հիմնական հասարակական տրանսպորտի երթուղիներին համեմատաբար մոտիկ վայրերում, ավտոկայանման հնարավորությունների ստեղծումը/ընդլայնումը, ավտոկայանման ծառայության բովանդակության վերանայումը (օրինակ՝ կայանվող ավտոմեքենաների համար՝

⁵ Գծապատկերը կառուցվել է բյուջեի կատարման 2019-2022 թվականների տարեկան և 2023 թվականի ինն ամիսների հաշվետվությունների հիման վրա:

ավտոկայանատեղիների ապահովագրության հաշվին անվտանգության երաշխիքի տրամադրումը), կենտրոնի բնակիչների ավտոկայանման խնդրի լուծումը և այլն: **Այլապես վտանգ կա, որ դրույքաչափերի բարձրացման բացասական հետևանքները էապես գերազանցելու են ակնկալվող դրական արդյունքին և, իրավամբ, չի բացառվում, որ այդ դրական արդյունքները չեզոքանան, և այս փոփոխությունը, ի վերջո, ունենա միայն ֆիսկալ ազդեցություն՝ խորացնելով առանց այն էլ բավական խոր սոցիալական բևեռացումը:**

3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2024 թվականի բյուջեով ծրագրված ընդհանուր ծախսերի մեծությունը 124.9 մլրդ դրամ է, որը 19.4 մլրդ դրամով կամ 18.4%-ով գերազանցում է 2023 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշին: Հարկ է նշել, որ 2023թ. բյուջեի ծախսերը ևս ճշտված պլանով բարձրացվել են՝ 23.3%-ով՝ հաստատված բյուջեի 105.5 մլրդ դրամից՝ 130.2 մլրդ դրամ: Այսինքն՝ **2024 թվականի բյուջեի ընդհանուր ծախսերը 2023-ի ճշտված պլանի ցուցանիշից պակաս են՝ 5.3 մլրդ դրամով կամ 4.0%-ով:**

3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Ընդհանուր ծախսերի 90.9%-ը կամ 107.9 մլրդ դրամը կազմում են ընթացիկ ծախսերը, որոնք 2023-ի հաստատված բյուջեի ցուցանիշից ավելի են 12.5%-ով կամ 12.0 մլրդ դրամով, իսկ **ճշտված պլանի ցուցանիշից պակաս են՝ 5.5 մլրդ դրամով կամ 4.9%-ով:**


2023 թվականի հաստատված բյուջեի համեմատ 2024-ի բյուջեով ավելանալու են ընթացիկ ծախսերի բոլոր բաղադրիչների գծով ծախսերը:

Սպասվում է պարզևատրումների ֆոնդի «աննախադեպ» աճ: Պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար 2024-ի բյուջեով հատկացվող միջոցները 2023-ի համեմատ ավելացել են 86.6%-ով: Այսինքն՝ այս ուղղությամբ ծախսերի աճի տեմպն ավելի քան 6.9 անգամ գերազանցում է ընթացիկ ծախսերի ընդհանուր աճի տեմպին: Հիշեցնենք, որ այս ուղղությամբ ծախսերը 2023-ի բյուջեում նույնպես զգալիորեն ավելացել էին՝ 2022-ի հաստատված բյուջեի ցուցանիշի համեմատ 50.6%-ով: **Այսինքն՝ պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար 2024թ. բյուջեով հատկացվող մեծությունը 2022-ի հաստատված բյուջեի ցուցանիշին կգերազանցի ավելի քան 2.8 անգամ:**

Ակնկալվում է, որ կապիտալ ծախսերն⁶ աճելու են 76.4%-ով կամ 7.4 մլրդ դրամով և կազմելու են 17.0 մլրդ դրամ: Ճշտված պլանի համեմատ աճն անհամեմատ ավելի «համեստ» է՝ 1.6% կամ 0.2 մլրդ դրամ:

Ընթացիկ և կապիտալ ծախսերի աճերի նպաստումներն ընդհանուր ծախսերի՝ 2023-ի հաստատված բյուջեի համեմատ աճին կազմում են համապատասխանաբար 11.4 և 7.0 տոկոսային կետ:

Գծապատկեր 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, մլրդ դրամ⁷




Կապիտալ ծախսերի 2024թ. բյուջեով ծրագրվող աճը, իհարկե, չափազանց ողջունելի է, սակայն դրանց կատարողականի առումով առկա է թերահավատություն, քանի որ արդեն մի քանի տարի շարունակ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը զգալիորեն թերակատարվում են (Գծապատկեր 5):

⁶ Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի («+» նշանով) և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի («-» նշանով) հանրագումարը:

⁷ Գծապատկերը կառուցվել է 2020-2022 թվականների բյուջեի կատարման հաշվետվությունների և 2023 և 2024 թվականների տարեկան բյուջեների հիման վրա:

Գծապատկեր 5. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի՝ ճշտված պլանի նկատմամբ թերակատարումը, %⁸



*Քանի որ 2023թ. բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում այդ ամիսների ճշտված պլանը տրված չէ, ինն ամիսների փաստացի մեծությունները համեմատվել են հաշվետվությունում ներկայացվող տարեկան ճշտված պլանի ցուցանիշների հետ:


3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Ծախսերն ըստ ուղղությունների խմբավորվել են հետևյալ կերպ.

- **Ընդհանուր նշանակության ծառայություններ**՝ ընդգրկում են «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» և «Պաշտպանություն» հոդվածները,
- **Տնտեսական ծառայություններ**՝ ներառում են «Տնտեսական հարաբերություններ» և «Շրջակա միջավայրի պաշտպանություն» հոդվածները,
- **Սոցիալական ծառայություններ**՝ ներառում են «Առողջապահություն», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն», «Հանգիստ, մշակույթ և կրոն» և «Սոցիալական պաշտպանություն» հոդվածները,
- «Կրթություն»,
- «Պահուստային ֆոնդ»:

⁸ Գծապատկերը կառուցվել է բյուջեի կատարման 2019-2022 թվականների տարեկան և 2023 թվականի ինն ամիսների հաշվետվությունների հիման վրա:

Գծապատկեր 6. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) կառուցվածքը, %



Ծախսերի կառուցվածքում 2024թ. ամենամեծ տեսակարար կշիռը՝ 33.8%, կունենան **կրթության ոլորտին** ուղղվող ծախսերը, որոնք կկազմեն 42.2 մլրդ դրամ: Դրանք 2023 թվականի բյուջեի ծախսերում տեսակարար կշռով երկրորդն էին՝ զիջելով տնտեսական ծառայություններին:


2024թ. ծախսերի կառուցվածքում երկրորդը՝ 33.1% տեսակարար կշռով, **տնտեսական ծառայությունների** ուղղությամբ կատարվելիք ծախսերն են: Դրանց մեծությունը կազմում է 41.4 մլրդ դրամ: Չնայած 2023թ. բյուջեի համեմատ տնտեսական ծառայությունների ուղղությամբ կատարվելիք ծախսերի բացարձակ մեծության աճին, դրանց տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում նվազել է՝ 36.4%-ից 33.1%: Ի դեպ, տնտեսական ծառայությունների ծախսերի՝ 2023թ. ճշտված պլանով ծրագրվող մեծությունը 38.4 մլրդ դրամից բարձրացվել է մինչև 50.1 մլրդ դրամ: **Այսինքն՝ 2024 թվականի բյուջեով պլանավորվող մեծությունը 17.3%-ով կամ 8.7 մլրդ դրամով զիջում է 2023թ. ճշտված պլանի ցուցանիշին:**

Ընդհանուր ծախսերի մեջ ունեցած տեսակարար կշռով հաջորդում են **սոցիալական ծառայություններին, ընդհանուր նշանակության պետական ծառայություններին** և **պահուստային ֆոնդի ձևավորմանն** ուղղվող միջոցները՝ համապատասխանաբար 16.5%, 9.7% և 6.8% տեսակարար կշիռներով: Դրանց գծով պլանավորվող ծախսերը կազմում են համապատասխանաբար 20.7, 12.1 և 8.5 մլրդ դրամ:

Ի դեպ, քանի որ 2023թ. բյուջեի ինն ամիսների կատարողականի հաշվետվությունում հիշատակվող ճշտված պլանով բարձրացվել են ըստ գործառնական դասակարգման բոլոր ծախսային խմբերի տարեկան ծրագրվող մեծությունները, ստացվում է, որ 2023թ. ճշտված պլանի համեմատ 2024թ.

բյուջեով աճելու են միայն կրթության ոլորտին ուղղվող և պահուստային ֆոնդի ձևավորման համար կատարվող ծախսերը:

Գծապատկեր 7. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ, մլրդ դրամ



Տնտեսական ծառայությունների ծախսերի՝ 2023թ. հաստատված բյուջեի համեմատ 7.9%-ով աճն առավելապես՝ 7.6 տոկոսային կետով, պայմանավորված է դրա բաղադրիչներից *տնտեսական հարաբերությունների* ոլորտին ուղղվող ծախսերի ավելացմամբ՝ 2023 թվականի հաստատված բյուջեով նախատեսված մեծության համեմատ 2.9 մլրդ դրամով կամ 10.5%-ով: Դրանք 2024թ. բյուջեով կազմելու են 30.5 մլրդ դրամ: Չնայած այս ուղղության ծախսերի ընդհանուր մեծության աճին, այնուամենայնիվ, որոշ կարևոր ծախսային խմբերում նվազում է պլանավորվում: Մասնավորապես, օրինակ, նախորդ տարվա բյուջեով պլանավորված մեծությունների համեմատ առավել էական նվազում է նախատեսվում «Վառելիք և էներգետիկա» խմբում՝ 64.3%-ով կամ 3.2 մլրդ դրամով: **Հնարավոր է, որ այս նվազեցումը կապված է ընթացիկ տարում այդ խմբի գծով ծախսերի ոչ բարձր կատարողականի հետ: Մասնավորապես, 2023թ. ինն ամիսներին խմբում կատարված փաստացի ծախսերը կազմել են տարեկան ճշտված պլանի ցուցանիշի ընդամենը 23.9%-ը:**

Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղվող ծախսերն աննշան՝ 0.1 մլրդ դրամով կամ 1.2%-ով ավելանալու են և կկազմեն 10.9 մլրդ դրամ: **Իսկ 2023թ. ճշտված պլանի հետ համեմատելու դեպքում ստացվում է, որ այդ ծախսերը 2024 թվականին էապես՝ 17.9%-ով նվազելու են:** 2024թ. աղբահանման ծառայություններին ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատ կաճեն 6.2%-ով կամ 0.3 մլրդ դրամով և կկազմեն 5.4 մլրդ դրամ կամ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղվող ծախսերի 49.0%-ը:

Կրթությանն ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 15.0%-ով կամ 5.5 մլրդ դրամով: Չնայած այդ աճին՝ ընդհանուր ծախսերի մեջ կրթության ոլորտին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը 2024թ. 1.0 տոկոսային կետով կնվազի և կկազմի 33.8%: Պատճառն այն է, որ մյուս ուղղություններին ուղղվող ծախսերի ընդհանուր մեծությունն աճել է կրթության ոլորտին ուղղվող ծախսերի աճի տեմպից ավելի բարձր տեմպով: Ճշտված պլանի հետ համեմատելու դեպքում ստացվում է, որ կրթությանն ուղղվող ծախսերի 2024թ. ակնկալվող աճը նույնպես ավելի փոքր է:

Կրթության ոլորտին ուղղվող ծախսերի կազմում 2023-ի համեմատ 56.0%-ով կամ 6.6 մլրդ դրամով աճել են նախադպրոցական կրթությանն ուղղվող ծախսերը՝ կազմելով 18.3 մլրդ դրամ: Տարրական ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերը նվազել են 5.4%-ով կամ 0.4 մլրդ դրամով և կազմել 7.8 մլրդ դրամ: Միջնակարգ ընդհանուր կրթության համար հատկացվող միջոցները՝ 10.2 մլրդ դրամ, 5.4%-ով կամ 0.5 մլրդ դրամով ավելի են 2023թ. հաստատված բյուջեի ցուցանիշից: Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններին ուղղված ծախսերը նվազելու են՝ 54.6%-ով կամ 1.0 մլրդ դրամով և կազմելու են 0.9 մլրդ դրամ:

Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը կավելանան 38.3%-ով և կկազմեն 20.7 մլրդ դրամ՝ 5.4 տոկոսային կետով նպաստելով ընդհանուր ծախսերի աճին: Ընդ որում, սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի աճին ամենամեծ նպաստումը՝ 29.7 տոկոսային կետ, ունենալու է «Հանգիստ, մշակույթ և կրոն» հոդվածով ծախսերի 4.4 մլրդ դրամով կամ 91.9%-ով ավելացումը: **Առողջապահությանն** ուղղվող ծախսերը կնվազեն 40.6%-ով կամ 0.2 մլրդ դրամով:

Ընդհանուր նշանակության ծառայություններին ուղղվող ծախսերը 2024թ. բյուջեով կրճատվելու են՝ 4.4%-ով կամ 0.6 մլրդ դրամով: Նվազումն առավելապես պայմանավորված է նախագծային աշխատանքներին ուղղվող ծախսերի կրճատմամբ: Ակնկալվում է, որ ընդհանուր նշանակության ծառայություններին ուղղվող ծախսերը կկազմեն 12.1 մլրդ դրամ: Այս ծախսային ուղղությամբ նվազումը բյուջեի ընդհանուր ծախսերի աճին կհակազդի 0.5 տոկոսային կետով:

3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի

Ստորև ներկայացվում է հակիրճ տեղեկատվություն 2024թ. իրականացվելիք որոշ ծրագրերի համար Երևան քաղաքի բյուջեով հատկացվելիք միջոցների վերաբերյալ:

«Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում» ծրագրի գծով ծախսերը նվազելու են 6.1 անգամ. նախատեսվել է 38.1 մլն դրամ՝ 2023 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 231.3 մլն դրամի դիմաց:

«Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» ծրագրով 2024թ. բյուջեով նախատեսված գումարը՝ 3.7 մլրդ դրամ, 2023թ. բյուջեի ցուցանիշից 4.5%-ով ավելի է:

«Եզրաքարերի վերանորոգում» ծրագրով 2024թ. բյուջեով նախատեսված գումարը՝ 176.5 մլն դրամ, զգալիորեն՝ 34.8%-ով, զիջում է 2023թ. բյուջեի ցուցանիշին:

«Վերելակների հիմնանորոգում» ծրագրով 2024թ. նախատեսված գումարը՝ 1.1 մլրդ դրամ, փոքր-ինչ՝ 1.5%-ով զիջում է 2023թ. հաստատված բյուջեի ցուցանիշին: Ինչպես և 2023 թվականին, 2024թ. ևս նախատեսվում է բազմաբնակարան շենքերի համար ձեռք բերել 100 վերելակ, ինչպես նաև հին վերելակների պահպանման նպատակով ձեռք բերել և տեղադրել անհրաժեշտ սարքավորումներ:

«Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն» ծրագրով հատկացվող գումարը 2023-ի համեմատ նվազեցվել է 58.9%-ով կամ 72.1 մլն դրամով:

2024թ. բյուջեով «Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայությունների» համար 2023թ. համեմատ նախատեսվել է 38.5%-ով՝ 145.1 մլն դրամով պակաս գումար՝ 231.5 մլն դրամ:

2024թ. բյուջեով «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսերը» աճել են 8.7%-ով և կազմում են 5.0 մլրդ դրամ:

«Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում» և «Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում» ծրագրերով ընդհանուր առմամբ նախատեսվել է 824.2 մլն դրամ՝ 2023 թվականի հաստատված բյուջեով պլանավորված 911.4 մլն դրամի դիմաց:

«Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվող ծախսերը՝ 40.2 մլն դրամ, 9.9 անգամ զիջում են 2023 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշին:

«Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով 2024թ. նախատեսվել է 2.4 մլրդ դրամ, որը 2023 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից ավելի է 1.3 մլրդ դրամով:

«Նախադպրոցական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում» ծրագրով նախատեսվող գումարը նվազել է 139.1 անգամ և կազմել է ընդամենը 12.0 մլն դրամ:


2024թ. բյուջեով ևս, ինչպես նախորդ երկու տարիներին «Երևան քաղաքի գլխավոր հատկազոտի իրականացման վերլուծություն» ծրագրով գումար է նախատեսվել՝ 250.0 մլն դրամ: Ծրագրով հատկացված գումարը 2023թ. կազմել է 290.0 մլն դրամ, իսկ 2022թ.՝ 90.0 մլն դրամ:

Արձանագրենք, որ, չնայած 2023թ. բյուջեի համեմատ ընդհանուր ծախսերի աճին, քաղաքային զարգացման մի քանի բավական կարևոր ծրագրերի ֆինանսավորումը նվազել է: Իսկ մի շարք ծրագրերի գծով նախատեսվող հատկացումների ավելացումը բավականաչափ հիմնավորված չէ: Ավելին, դրանցից մի մասի դեպքում ֆինանսավորման աճը ներկա պայմաններում տարակուսանքի տեղիք է տալիս: Օրինակ՝ «Տոնական ձևավորում» ծրագրի գծով հատկացումներն աճելու են 3.1 անգամ և կազմելու են 123.9 մլն դրամ:

4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն կունենա 0.3 մլրդ դրամ պակասուրդ՝ 2023թ. հաստատված բյուջեով պլանավորված 0.4 մլրդ դրամի դիմաց:

Գծապատկեր 8. Երևան քաղաքի բյուջեի պակասուրդը, մլրդ դրամ



Բյուջեի պակասուրդը նախատեսվում է ֆինանսավորել Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետություն» ծրագրի շրջանակներում ստանալիք 648.9 մլն դրամ վարկի հաշվին:

Բազմիցս նշվել է, որ չափազանց մտահոգիչ է այն հանգամանքը, որ համապետական մակարդակում բյուջետային պլանավորման ոլորտում առկա լուրջ խնդիրները «տեղափոխվում են» նաև համայնքային մակարդակ:

Մասնավորապես, 2018-2021թթ. ժամանակահատվածի բոլոր տարիներին Երևանի բյուջեով պլանավորվել է պակասուրդ, սակայն փաստացի այդ տարիներին արձանագրվել է հավելուրդ: 2022-ի բյուջեով նախատեսվել է շուրջ 4.3 մլրդ դրամի պակասուրդ, սակայն բյուջեն փաստացի ունեցել է ավելի քան կրկնակի մեծ պակասուրդ: Պատճառն այն է, որ փաստացի եկամուտները 8.4 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 4.0 մլրդ դրամով ցածր են եղել բյուջեով պլանավորված մեծություններից: 2023թ. բյուջեով նախատեսվել է 0.4 մլրդ դրամ պակասուրդ, ճշտված պլանով պակասուրդը հասցվել է 11.3 մլրդ դրամի, սակայն ինն ամիսների տվյալներով փաստացի արձանագրվել է 0.4 մլրդ դրամ հավելուրդ:

Ի դեպ, այս մտահոգիչ երևույթը բավական լայն տարածում ունի՝ տարվա ընթացքում վերանայվում է ցուցանիշի պլանավորվող մեծությունը, և ճշտված պլանով սահմանվում է այլ մեծություն՝ այն ակնկալիքով, որ փաստացի ձևավորվելիք մեծությունն ավելի մոտիկ կլինի ճշտված պլանային մեծությանը, սակայն ժամանակահատվածի վերջում պարզվում է, որ փաստացի և պլանային մեծությունների միջև շեղումը նվազելու փոխարեն ավելացել է: Դա խոսում է այն մասին, որ բյուջետային պլանավորման համապետական մակարդակում առկա լուրջ խնդիրները Երևան քաղաքի բյուջետային պլանավորման դեպքում ավելի ընդգծված և խոր կերպով են դրսևորվում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Երևան քաղաքի 2024թ. բյուջեի վերաբերյալ վերլուծության հիման վրա արձանագրենք.

- **Բյուջեով ծրագրվում է եկամուտների աճ, որը հիմնականում պայմանավորված է տեղական տուրքերի, տեղական վճարների, այդ թվում՝ դրանց դրույքաչափերի բարձրացմամբ և գույքային հարկերի գծով պլանավորվող մուտքերի ավելացմամբ:**

2024թ. բյուջեով պլանավորվում են 124.6 մլրդ դրամի եկամուտներ՝ 2023թ. հաստատված բյուջեով նախատեսվածից 19.5 մլրդ դրամով կամ 18.6%-ով ավելի: Ի դեպ, 2023 թվականի բյուջեով սկզբնապես հաստատված 105.1 մլրդ դրամի եկամուտները հետագայում ճշտված պլանով բարձրացվել են 13.1%-ով: Այսինքն՝ 2023-ի ճշտված պլանի համեմատ 2024 թվականի բյուջեի ընդհանուր եկամուտների ակնկալվող աճը կազմում է 4.9% կամ 5.8 մլրդ դրամ:

Տարակուսելի է, որ չնայած ավտոկայանման վճարի դրույքաչափերի կտրուկ աճին, 2024թ. բյուջեով նախատեսվում է ավտոտրանսպորտային միջոցների ավտոկայանատեղիում կայանման համար գանձվելիք վճարների

չափազանց «համեստ» աճ: Այնպիսի տպավորություն է, որ այն բյուջեում գրեթե հաշվի չի առնվել կա՛մ «մտածված» («ապահովության համար»)՝ դրույքաչափերը հիմնականում ֆիսկալ նպատակով բարձրացնելու մեղադրանքից խուսափելու համար, կա՛մ համոզված լինելով, որ դրույքաչափերի կտրուկ աճը կհանգեցնի կայանվող ավտոմեքենաների ֆիզիկական ծավալների գրեթե նույնպիսի կտրուկ նվազման: Չի բացառվում, որ հետագայում այս վճարի բարձրացման հաշվին բյուջեի փաստացի եկամուտների պլանավորվածից ավելին լինելու դեպքում այդ հանգամանքը իշխանությունները պատրաստվում են ներկայացնել որպես ևս մեկ «աննախադեպ» ձեռքբերում եկամուտների հավաքագրման գործում:

Քաղաքային իշխանությունն ավտոկայանման վճարների դրույքաչափերի կտրուկ բարձրացման անհրաժեշտությունը հիմնավորում է Երևանը (հատկապես՝ կենտրոնը) ավտոմեքենաներից «բեռնաթափելու» հրատապ անհրաժեշտությամբ: Այնուամենայնիվ, միանշանակ է, որ խնդրի լուծման այդպիսի արմատական եղանակին պետք է նախորդած լինեին մի շարք առաջնահերթ քայլեր: Հակառակ դեպքում **դրույքաչափերի բարձրացման բացասական հետևանքները կարող են գերազանցել ակնկալվող դրական արդյունքին:** Ավելին, չի բացառվում նույնիսկ, որ ակնկալվող դրական արդյունքները հիմնականում չեզոքանան, և այս փոփոխությունը, ի վերջո, ունենա միայն ֆիսկալ ազդեցություն՝ առավել խորացնելով առկա լուրջ սոցիալական բևեռացումը:

Նույն մտահոգությունն առկա է նաև տեղական տուրքերի դրույքաչափերի կտրուկ բարձրացման կապակցությամբ:

• **2024 թվականի բյուջեի ընդհանուր ծախսերի մեծությունը 124.9 մլրդ դրամ է, որը 19.4 մլրդ դրամով կամ 18.4%-ով ավելի է 2023-ի հաստատված բյուջեի ցուցանիշից:** Ինչպես և բյուջեի եկամուտները, ծախսերը նույնպես 2023-ի ճշտված պլանով բարձրացվել են 23.3%-ով կամ 24.7 մլրդ դրամով՝ չնայած ինն ամիսների կատարողականի հաշվետվության համաձայն կատարվել են տարեկան նախատեսվող ծախսերի ընդամենը 54.1%-ի չափ կամ 70.5 մլրդ դրամի ծախսեր: Այսինքն՝ **ընդհանուր ծախսերի՝ 2024 թվականի բյուջեով պլանավորվող մեծությունը 2023-ի ճշտված պլանի ցուցանիշից պակաս է՝ 5.3 մլրդ դրամով կամ 4.0%-ով:**

Բյուջեի ծախսերով նախատեսված ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած 2023թ. բյուջեի համեմատ ընդհանուր ծախսերի աճին, քաղաքային զարգացման մի քանի բավական կարևոր ծրագրերի ֆինանսավորումը նվազել է: Իսկ որոշ ծրագրերի գծով ֆինանսավորման աճը ներկա պայմաններում այնքան էլ արդարացված չէ: Օրինակ՝ «Տոնական

ձևավորում» ծրագրի գծով հատկացումները 2023-ի բյուջեի համեմատ աճելու են 3.1 անգամ և կազմելու են 123.9 մլն դրամ:

Նախատեսվում է պարգևատրումների ֆոնդի «աննախադեպ» աճ: Պարգևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների մեծությունը 2024-ի բյուջեում 2023-ի համեմատ ավելացել է 86.6%-ով, իսկ 2022-ի հաստատված բյուջեի ցուցանիշին այն արդեն գերազանցելու է ավելի քան 2.8 անգամ:

• Պլանավորվում է, որ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն կունենա 0.3 մլրդ դրամ պակասուրդ՝ 2023թ. հաստատված բյուջեով պլանավորված 0.4 մլրդ դրամի դիմաց: Ի դեպ, 2023թ. բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում ներկայացված ճշտված պլանով 2023թ. նախատեսված է 11.3 մլրդ դրամ պակասուրդ, մինչդեռ առաջին ինն ամիսներին փաստացի արձանագրվել է 0.4 մլրդ դրամ հավելուրդ:

• Բյուջետային պլանավորման համապետական մակարդակում առկա խնդիրներն ավելի ընդգծված և խոր կերպով են դրսևորվում Երևան քաղաքի բյուջեի պլանավորման դեպքում: Պլանային և փաստացի մեծությունների միջև շեղումը չափազանց մեծ է: Ավելին, կատարողականի հաշվետվությունները ցույց են տալիս, որ շատ հաճախ հաստատված բյուջեի մեծությունների ճշտված պլանով վերանայման արդյունքում շեղումը փաստացի ձևավորված մեծությունից կրճատվելու փոխարեն ավելանում է: Այս իմաստով, Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի որոշ ցուցանիշների բավականաչափ իրատեսական լինելու վերաբերյալ թերահավատությունն անհիմն չէ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: